Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
մարտի 30-ի նիստի N 13
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	Կատարման ժամկետը	Ֆինան-սական ապահովումը	Վերստուգելի չափանիշը
1	2	3	4	5	6	7
1.«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ	Օրենքի նախագծի ընունմամբ ակնկալվում է ՀՀ բնակավայրերի աղբահանության և սանիտարական մաքրման միասնական քաղաքականության և մոտեցումների կիրառման նպատակով սահմանել պետական լիազոր մարմնի լիազորությունները տվյալ բնագավառում:	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	ՀՀ բնապահպանու-թյան նախարարություն	2017 թվականի սեպտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջում	Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման միասնական համակարգված ուղղություններ և սկզբունքներ
2.«Աղբահանության, սանիտաական մաքրման և աղբավայրերի շահագործման բնագավառում պետական լիազոր մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ	Որոշման նախագծի ընդունմամբ ակնկալվում է ձևավորել ՀՀ բնակավայրերի աղբահանության և սանիտարական մաքրման, կոշտ կենցաղային թափոնների կառավարման բնագավառում պետական միասնական և համակարգված քաղաքականությունը, գերակայությունները և սահմանել զարգացման հիմնական սկզբունքներն ու ուղղությունները:	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	-	1-ին կետի միջոցառմամբ նախատեսված օրենքի ընդունումից հետո՝ մեկամսյա ժամկետում	Ֆինանսավորում չի պահանջ-վում	Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման միասնական համակարգված քաղաքականության վարում

3. «ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 3-ի թիվ 258-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ	Կանոնադրական փոփոխություններով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության նպատակներն ու խնդիրները կհամալրվեն նաև աղբահանության, սանիտարական մաքրման, աղբավայրերի շահագործման միասնական և ընդհանուր նորմատիվ պահանջներ սահմանելու վերաբերյալ առկա փորձի ընդհանրացմամբ, միջազգայնորեն ընդունված չափանիշների ուսումնասիրմամբ և նորմատիվ դաշտը սահմանելու նպատակով առաջարկությունների ներկայացմամբ:	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	-	1-ին կետի միջոցառմամբ նախատեսված օրենքի ընդունումից հետո մեկամսյա ժամկետում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության նպատակների ու խնդիրների համալրում
4. «ՀՀ Լոռու մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ	ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությամբ սահմանված ապագա տարածաշրջանային ենթահամակարգերի ներդրման և զարգացման ռազմավարական պլանավորում և աշխատանքների ուրվագծում՝ հաշվի առնելով տարածաշրջանային առանձնահատկությունները:	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ԿԱ քաղաքաշինական պետական կոմիտե ՀՀ մարզպետարաններ	2017 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ Լոռու մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման սկզբունքներ և ուղղություններ
5. «ՀՀ Շիրակի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ	ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությամբ սահմանված ապագա տարածաշրջանային ենթահամակարգերի ներդրման և զարգացման ռազմավարական պլանավորում և աշխատանքների ուրվագծում՝ հաշվի առնելով տարածաշրջանային առանձնահատկությունները:	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	ՀՀ բնապահպանու-թյան նախարարություն, ՀՀ ԿԱ քաղաքաշինական պետական կոմիտե ՀՀ մարզպետարաններ	2017 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	ՀՀ Շիրակի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման սկզբունքներ և ուղղություններ

6. «ՀՀ Սյունիքի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ	ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությամբ սահմանված ապագա տարածաշրջանային ենթահամակարգերի ներդրման և զարգացման ռազմավարական պլանավորում և աշխատանքների ուրվագծում՝ հաշվի առնելով տարածաշրջանային առանձնահատկությունները:	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ԿԱ քաղաքաշինական պետական կոմիտե ՀՀ մարզպետարաններ	2017 թվականի նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ Սյունիքի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման սկզբունքներ և ուղղություններ
7. Աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտն իրավակարգավորող իրավական ակտերի վերլուծության արդյունքներով առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկությունների մշակում և ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ	Աղբահանության և սանիտարական ոլորտի օրենսդրական դաշտի ուսումասիրություն, վեր հանել ոլորտի իրավակարգավորումներում առկա բացերը՝ և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մշակել դրանց լուծման ուղղությամբ առաջարկություններ:	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	-	1-ին կետի միջոցառմամբ նախատեսված օրենքի ընդունումից հետո՝ 6ամսյա ժամկետում	Ֆինանսավորում չի պահանջվում	Աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտի իրավական դաշտի բարելավում
8. «Աղբավայրերի նախագծման, կառուցման և շահագործման կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ	Կանոնակարգի մշամամբ և հաստատմաբ նախատեսվում է ապահովել հանրապետությունում բնապահպանական, սոցիալ-տնտեսական, մարդու վրա առողջության ազդեցության նվազեցման և շրջակա միջավայրի պահպանման տեսանկյունից միջազգային նորմերին համապատասխան աղբավայրերի կառուցումն ու շահագործումը:	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ ԿԱ քաղաքաշինական պետական կոմիտե	1-ին կետի միջոցառմամբ նախատեսված օրենքի ընդունումից հետո՝ 18 ամսյա ժամկետում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հանրապետությունում համակարգված և միասնական աղբավայրերի նախագծում, կառուցում և շահագործում

9.Աղբահանության և սանիտարական մաքրման նորմերի մշակում	Աղբահանության և սանիտարական նորմերի սահմանումը հնարավորություն կընձեռի կիրառել ՀՀ բնակավայրերում անվտանգ, սոցիալ-տնտեսապես արդյունավետ, շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության նվազեցման, բնակչության հարմարավետության ապահովման տեսանկյունից աղբահանության և սանիտարական մաքրման միասնական հստակ նորմեր և չափանիշներ:	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ ԿԱ քաղաքաշինական պետական կոմիտե	1-ին կետի միջոցառմամբ նախատեսված օրենքի ընդունումից հետո՝ 12 ամսյա ժամկետում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Աղբահանության և սանիտարական մաքրման միասնական հստակ նորմեր և չափանիշներ
10. Աղբահանության և սանիտարական մաքրման հաշվարկների մեթոդաբանության մշակում	Հնարավորություն կընձեռվի հանրապետությունում կիրառել միասնական հաշվարկային մեթոդաբանություն՝ ինչն իր հերթին հնարավորություն կտա բարելավել աղբահանության և սանիտարական մաքրման համակարգը:	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ	1-ին կետի միջոցառմամբ նախատեսված օրենքի ընդունումից հետո՝ 18 ամսյա ժամկետում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Աղբահանության և սանիտարական մաքրման միասնական և հստակ հաշվարկների ապահովում